ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Ռոզա Յուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Մարդկային զարգացման հայեցակարգում ներկայացված ցուցանիշների համակարգում առանձնահատուկ և կարևոր տեղ ունի բնակչության կենսամակարդակը: Որքան բարձր է բնակչության կենսամակարդակը, այնքան այլ հավասար պայմաններում մեծ են մարդկային զարգացման իրական հնարավորությունները: Որպես այդպիսին՝ կենսամակարդակը բնակչության իրական սպառումն արտացոլող սոցիալ-տնտեսական կատեգորիա է, որն արտահայտում է բնակչության պահանջմունքների զարգացման աստիճանը, պահանջմունքների կառուցվածքը, հասարակական ճանաչում ստացած հիմնական կենսական պահանջմունքների բավարարման իրական մակարդակը: Բնակչության սոցիալական կենսապայմանների բարելավումը, բնակչության շերտավորման ու եկամուտների բաշխման բևեռացման հաղթահարումը, բնակչության աղքատացման մակարդակի կրճատումը սոցիալական պետության պարտականությունն է:

Աղքատության հաղթահարումը և եկամտային անհավասարության վերացումն այն գերխնդիրներից են, որոնց լուծմամբ է պայմանավորված երկրի հետագա առաջընթացը: Կենսամակարդակը թույլ է տալիս պատկերացում կազմել հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի մասին (կրթական և առողջապահական մակարդակ, աղքատության մակարդակ) և հանդես է գալիս որպես տնտեսական և սոցիալական հարաբերությունների ամփոփ ցուցանիշ:

Ռոզա Ավագյանի ատենախոսությունում Արցախի Հանրապետության օրինակով ներկայացվել է սոցիալ-տնտեսական քաղաքականության այնպիսի գործողությունների ամբողջություն, որոնց իրականացումը կնպաստի բնակչության եկամուտների ավելացմանը, զբաղվածության ապահովմանը, սոցիալական ընդհարումների կանխմանը, սոցիալական լարվածության թուլացմանը, արդյունքում կբարձրանա բնակչության կենսամակարդակը:

Աշխատանքում կարևորվել է արցախահայության շրջանում աղքատության հաղթահարման արդյունավետ կազմակերպման գործընթացում պետության կողմից համապատասխան տնտեսական լծակների կիրառումը, որոնց նպատակային օգտագործումը կնպաստի քաղաքային և գյուղական բնակչության աղքատության կրճատմանը: Աշխատանքում վերլուծվել են բնակչության կենսամակարդակի հիմնական ցուցանիշները, բնակչության դրամական եկամուտները, սպառողական ծախսերը և երկրում առկա աղքատության մակարդակը:

Ատենախոսի կողմից արդարացիորեն նշվում է, որ Արցախի Հանրապետությունում սոցիալական ոլորտի բարեփոխումները միասնական սոցիալական քաղաքականության ձևաչափ չեն ունեցել և չեն տարանջատվել նպատակների գերակայությամբ, հետևաբար՝ ատենախոսի կողմից դրանք որակվում են առավելապես մարտավարական, քան ռազմավարական նշանակության: Այս համատեքստում հեղինակի կողմից ընդգծվում է, որ «երկրի կառավարության ջանքերն ուղղված խոցելի խմբերի կարիքների բավարարմանը, դեռևս կրում է չհամակարգված մոտեցում, քանզի սոցիալական քաղաքականությունը գտնվում է կայացման փուլում, իսկ առկա բացթողումները պայմանավորված են տնտեսական իրական հնարավորությունների վրա հիմնված սոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի բացակայությամբ, սոցիալական ապահովության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմքերի անբավարարությամբ, սոցիալական գործընթացների հետազոտության համակարգի բացակայությամբ, ինչի ներդրումը կհստակեցնի բարեփոխումների սոցիալական հետևանքների կանխատեսումների ճշգրտությունը»:

Բացի վերոնշյալից, աշխատանքում քննարկվել են նաև կրթության և առողջապահության ոլորտներում առկա հիմնախնդիրները, տրվել են խնդիրների լուծմանն ուղղված այն միջոցառումները, որոնք հնարավորություն կտան բարելավել ինչպես կրթական համակարգը, այնպես էլ առողջապահական ծառայությունների մատչելիությունը: Բացահայտվել են առողջապահության ոլորտում տեղ գտած թերությունները, և մատնանշվել զարգացման այն ուղղությունները, որոնք կօգնեն բարելավել առողջապահական համակարգի աշխատանքը, ապահովել բուժօգնության մատչելիությունը: Նշված համախումբ հիմնախնդիրների վերլուծությամբ էլ հիմնավորվում է ատենախոսության թեմայի ընտրությունն ու կարևորությունը հետագա տարածաշրջանային զարգացումների համատեքստում Արցախի Հանրապետությանը

վերաբերող նմանատիպ հետազոտական աշխատանքների գիտատեսական ու կիրառական ռազմավարական նշանակությամբ:

Ռոզա Ավագյանի թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ ինը ենթագլով, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը, ուսումնասիրության մեթոդները, շարադրված են նպատակներն ու խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, սահմանված է տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության «Բարեկեցության տեսամեթոդական հիմքերը» վերտառմամբ առաջին գլխի երեք ենթագլուխներում ներկայացվել են տնտեսական աճը և դրա հաշվարկման ժամանակակից մոտեցումներն ու մոդելները, վերլուծվել են բնակչության կենսամակարդակի վրա ազդող գործոնները, դրանց կառավարման կազմակերպատնտեսական և գնահատման ժամանակակից մոտեցումները: Վերջին ենթագլխում ատենախոսն իրականացրել է բնակչության աղքատության հաղթահարման և կենսամակարդակի բարձրացման միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական աճի և բարեկեցության մակարդակի վերլուծությունն ու գնահատականը Արցախի Հանրապետությունում» գլխում ատենախոսը ներկայացրել է Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների վերլուծությունը, հետազոտել է բարեկեցության մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները, դրանց վերլուծությամբ բացահայտել է բարեկեցության մակարդակի բարձրացման հիմնախնդիրները: Երկրորդ գլխում առանձնացված կարևորվել են նաև աղքատության հաղթահարման պետական ծրագրերը և սոցիալական քաղաքականությունը Արցախի Հանրապետությունում:

Ատենախոսության երրորդ՝ «Բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» գլխում ատենախոսը ներկայացրել է տնտեսական կայուն աճի ապահովման և տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները Արցախում, ուսումնասիրվել են սոցիալական տրանսֆերտները և դրանց դերը կենցաղային աղքատության հաղթահարման գործում: Ատենախոսության վերջին ենթագլխում որպես ամփոփում գնահատվել են աղքատության հաղթահարման պետական աջակցության կառուցակարգերը և սոցիալական քաղաքականության կատարելագործման ուղիները Արցախի Հանրապետությունում:

Արդյունքում կարելի է փաստել, որ ատենախոսությունում համակողմանի ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առաջադրված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններում հանրագումարի են բերվել հիմնական արդյունքները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ հանդիսանալով դրա հիմնական դրույթների արտացոլումը: Հեղինակի կողմից հրապարակված թվով 9 գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում հետազոտական հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և հիմնավորվածնությամբ: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, գիտավերլուծական բովանդակությամբ, այն հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ուսումնասիրելով թեմային վերաբերվող գրականությունը՝ հեղինակը կարողացել է համակողմանիորեն վերլուծել Արցախի Հանրապետությունում բնակչության բարեկեցության բարձրացման հիմնախնդիրները, գնահատել դրանց կարգավորման հնարավորությունները՝ տնտեսության զարգացման, աղքատության հաղթահարման և սոցիալական քաղաքականության բարելավման համատեքստում:

Ընդհանուր առմամբ, աշխատանքում իրականացվել են տեսական և գործնական բնույթի գիտագործնական վերլուծություններ, որոնք հիմնավորված են համատասխան արժեքային գնահատականներով, ներկայացված են 12 կոնկրետ առաջարկություններով, ինչպես տնտեսագիտության տեսության, այնպես էլ տնտեսության մեջ անմիջական կիրառման հասցեականությամբ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Նկատի ունենալով թեմայի բազմաշերտությունն ու բարդությունը՝ հարկ եմ համարում աշխատանքի վերաբերյալ կատարել նաև մի շարք դիտարկումներ, մասնավորապես՝

1. Ատենախոսության ներածությունում բավարար չափով ներկայացված չէ հիմնախնդրի հետազոտվածության, մշակվածության աստիճանը:

2. Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը սոցիալական տեղեկատվությունը դիտարկեր և ուսումնասիրեր, նախ, որպես սպառողական վարքագիծ և կատեգորիա, այնուհետև որպես արտադրության զարգացման խթանիչ գործոն՝ պահանջարկ ձևավորող կատեգորիա:

3. Ատենախոսության երկրորդ գլուխը հարուստ է բազում հիմնախնդիրների մատնանշմամբ, իսկ երրորդ գլուխը դրանց լուծմանն ուղղված բազմաթիվ առաջարկություններով, սակայն միևնույն ժամանակ առկա է այդ հիմնախնդիրների և առաջարկվող լուծումների համակարգվածության պակաս:

4. Աշխատանքում կան բազմաթիվ տեխնիկական բնույթի սխալներ և բացթողում. օրինակ, աղյուսակ 2.3 և 2.4 բացակայում են չափի միավորները, աղյուսակ 2.7 և 2.8 վերնագրերը որոշակիորեն չեն համապատասխանում տեքստային բովանդակություններին, շարադրված տեքստում առկա են խմբագրական ու ձևակերպական անճշտություններ, օրինակ, էջեր 3, 12, 23, 47, 48, 84, 96, 102 և այլն:

Նշված նկատառումները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին առավել խորը բացահայտելու և գնահատելու տնտեսության զարգացման համատեքստում բնակչության կենսամակարդակի բարելավման առանձնահատկությունները Արցախի Հանրապետության օրինակով:

Եզրակացություն

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի կարևորությունն ու հետազոտության փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի կողմից գիտականորեն հիմնավորված վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ Ռոզա Յուրիի Ավագյանի «Բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները Արցախի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Տ.Լ. ՔՈՉԱՐՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոս Տոնիկ Քոչարյանի տորագրության իսկությունը հաստատում եմ

ՀԱԱՀ գիտ. քարտուղար, գ.գ.թ., դոցենտ **Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ**
25.06.2021 թ.